ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ[1]

15. ԲԵՐԻԱ ԱՎԱՆԸ

Շահումյան փողոցի վրա, պարզ ու կոկիկ մի շենք է մերձքաղաքային երթևեկության ավտոկայանը, որտեղից մեր ընդարձակ մայրաքաղաքի հեռավոր թաղամասերը մեկնում են հանգստավետ ավտոբուսներ, դանազան ուղղությամբ փոխադրելու համար ուղևորներին։

Կիրովի անվան մանկական մշտադալար այգին, իր ծառերովն ու ծառուղիներովը, ծաղիկներովն ու ծաղկաստանովը ավելի հաճելի է դարձնում այս կայարանը, որ եռուն ու կյանքոտ տեսարան է պարզում օրվա ամեն ժամին՝ շրջաններից դեպի մայրաքաղաք ժամանող կամ մայրաքաղաքից դեպի շրջանները մեկնող ավտոների և ճանապարհորդների ներկայությամբ։ Այստեղ, կայանում, ամեն ինչ ընթանում է կանոնավոր։ Երկարատև ու հյուծիչ սպասում դոյություն չունի, որովհետև մեկնած ավտոբուսի տեղ մի ուրիշը ժամանել է արդեն և ուղևորը, տոմսարկղից տոմսը վերցնելուց հետո, նստում է ավտոյի մեջ։ Որոշյալ ժամկետին ավտոբուսը շարժվում, մեկնում է կատարելու համար իր երթուղին, թեկուզ տոմսը վերցրած մի ուղևոր բացակայի։

Ավտոկայանից և այնտեղ սահմանած կարգ ու կանոնից իմ ստացած տպավորությունը ճիշտ պատկերացնելու համար, պետք է ճանապարհորդած լինել Թյուրքիայում, Միջին Արևելքի կամ այլ դրամատիրական երկրներում, ուր ողևորական ավտոների հատուկ դարաժներում տիրապետում են դժոխային ժխորը, դոռում-դոչումը, հայհոյանքն ու կռիվը։ Այնտեղ, այդ երկրներում տեղափոխությունը խոշոր տաժանք է, չարչարանք։ Քսան ուղևորի սահմանված ավտոբուսը, այնտեղ, մինչև տանիքը լցվում է իր տարողությունից եռապատիկ ավելի ուղևորներով ու բեռներով՝ սեփականատիրոջ օգտին ավելի մեծ շահույթ ապահովելու նպատակով։ Եվ այս իրադրության հետևանքը լինում է այն, որ ավտոյի արկածները դառնում են հաճախակի և բազմապատկվում ուղևորների մահացման դեպքերը։ Այդ երկրներում, օրինազանց մեքենավարն ու ոստիկանը ունեն իրենց հասարակաց լեզուն։ Օրինազանց մեքենավարը երբ ճանապարհի վրա հանդիպի երթևեկության վերահսկող ոստիկանին, հստակորեն տեսանելի ձևով, գործ է ածում իր երկու ձեռքերը, տանելով կրծքի վրա։ Եթե մեքենավարը մի ձեռքի հինգ մատները լայնք են բանալով դրել է կրծքի մի կողմի վրա, նշանակում է, որ ոստիկանին խոստանում է հինգ ոսկի կաշառք տալ օրինազանցության մասին աչք խփելու համար, իսկ եթե երկու ձեռքերը խաչաձև դրել է կրծքին, վարձատրությունը պետք է լինի կրկնապատիկը։ Այստեղ, Սովետական երկրում, դուք չեք հանդիպի նմանօրինակ երևույթների, որովհետև և՛ մեքենավարը, և՛ ուղևոր, և՛ միլիցիոներ, գիտակցորեն և հավասարապես հարգում են պետական օրենքները ու նյու-

1. Շարունակված ամսագրի 1952 թվականի հուլիսի, օգոստոսի, սեպտեմբերի, հոկտեմբերի, նոյեմբեր-դեկտեմբերի և 1953 թվականի փետրվարի համարներից։

թապես բավարարված լինելով պետության կողմից, կարիք չունեն խարդախության դիմելու։

Այն ճանապարհի այն կողմում, որտեղ դեպի Բերիա և Հայաստանի հյուսիսը տանող խճուղին բաժանվում է դեպի Էջմիածին տանող խճուղուց, ես հիշեցի հանգուցյալ Տ. Վարդան քահանա Վարդերեսյանին, որի մարմինը, համարյա մի ամիս առաջ, փետրվարի վերջերին, Վեհափառ Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ ամփոփվեց Ս. Գայանեի վանքի բակում։ Երկարատև հիվանդությունից (ջրգողությունից) վախճանած հիշյալ քահանայի հուղարկավորությունը, կատարված՝ գերաշնորհ Տ. Սահակ սրբազան եպիսկոպոսի նախագահությամբ և վարդապետների ու քահանաների դասի մասնակցությամբ, ինչպես նաև հանգուցյալի հարազատների, հայրենակիցների ու բարեկամների հոծ բազմության ներկայությամբ, իմաստալից մի դաս էր բոլոր նրանց, ովքեր, արտասահմանում մոլորած, «թուղթ հովվական» կամ «բանադրանք» են ստորագրում Սփյուռքի հայերին ուծացնելու համար իրենց հարազատ Հայրենիքից՝ Սովետական Հայաստանից և իրենց սիրելի Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուց, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից և Ամենայն Հայոց Հայրապետությունից։ «Սփյուռքի հայերը շատ լավ են ճանաչում բոլոր նրանց, ովքեր անցյալում և այժմ էլ կարելիր խոցոտել ու խոցոտում են հայ ժողովրդի սիրտը հանուն կրոնի. հանուն կարդինալական ծիրանի զգեստների, հանուն մամոնայի, հանուն աթոռամոլության և շահասիրության։ Սփյուռքի հայերը, ինչպես անցյալում ու ներկայումս եղել են ու են հավատարիմ զավակները Հայաստանի ու Էջմիածնի, հետագարում ևս և միշտ պիտի լինեն պատվար՝ արտասահմանյան և՛ օտար, և՛ ներքին ամեն տեսակի ոտնձգությունների դեմ, որոնք պիտի նկրտեն թուլացնել իրենց և Հայաստանի ու Էջմիածնի միջև գոյություն ունեցող հարազատի ու ծնողի անքակտելի կապը»,— խորհում եմ ես մտովի, ու թիկունքս տված պանդուխտ Արարատին, նայում եմ քառագագաթ Արագածին, որ ձյան ներքև ծածկված, արծաթափայլ շողշողում է Հայաստանի վառ արևի ցոլքերի տակ։

Բոլոր ուղևորներս ավտոյից իջնում ենք Նոր-Մալաթիայում։

Նոր-Մալաթիան՝ Բերիա ավանի երրորդ թաղամասն է, հյուսիսից դեպի հարավ՝ առաջինը լինելով Նոր-Սեբաստիան, երկրորդը՝ Զարփախը կամ Դալման, իսկ չորրորդը՝ Նելսոն Ստեփանյան թաղամասը, չորսն էլ մարգարիտների նման շարված ասֆալտե ճանապարհի երկու եզերքներին։

Բերիա ավանի վերոհիշյալ չորս թաղամասերի բնակիչների մեծամասնությունը բաղկացել է հայրենադարձներից, որոնք արժանացել են կառավարության հայրական մասնավոր հոգատարության։ Յուրաքանչյուր ընտանիք, պետության տրամադրած վարկով, կառուցել է իր բնակարանը, տնամերձ պարտեզով։ Բոլոր բնակարաններն էլ առանց բացառության էլեկտրիֆիկացված են և զուլալ ջուրը մշտապես հոսում է հարմար կետերի վրա զետեղված աղբյուր-ծորակներից։

Յուրաքանչյուր թաղամաս ունի իր կինոն, թատրոնը, կուլտուրայի տունը, գրական ակումբները՝ կից խմբակներով, գրադարանը և մանավանդ լրիվ միջնակարգ (տասնամյա) դպրոցները, որտեղ մասնավոր հոգատարության առարկա են դառել հայրենադարձ աշակերտները։ Ղեկավար մարմինների հատուկ կարգադրությամբ, արտաժամյա խմբակներ զբաղվել են այդ աշակերտների ուսումնական մակարդակը բարձրացնելու գործով։ Ու հիմա, նրանց միջին առաջադիմությունից գոհ են դպրոցների ղեկավարները։ Բերիա ավանի բնակիչ, ավելի քան քսան հայրենադարձ երիտասարդներ Երևանի համալսարանում մասնագիտական ուսում ստացած, ներկայումս պաշտոնավարում են շրջանի դպրոցներում որպես ուսուցիչ և շինարարական աշխատանքներում՝ որպես երկրաչափ։ Հիշեմ նրանցից Սարգիս Յափուջյանը և Ազատ Յափուջյանը (Հալեպից), որոնք ավարտելով Երևանի պետական համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետի հայկական բաժանմունքը, հայոց լեզվի դասատու են նշանակված առաջինը՝ Դավիթաշենի և երկրորդը՝ Անաստասավանի դպրոցներում։ Չպետք է մոռանալ, որ Հայաստանի դպրոցներում հայոց լեզվի դասատու լինելը այնքան էլ հեշտ գործ չէ, նկատի ունենալով, որ այստեղ, ընդհանուր ուսման հիմքն է հայ գրական լեզուն։ Ավանի միջնակարգ դպրոցներում, օտար լեզվի դասատու են օրիորդ Դամասկուհի Պուրսալյանը (սսեցի), Ավետիս Ավետիսյանը (Հունաստանից) և «Պասալ» մակդիրով ծանոթ Հարությունն Մարգարյանը (Ֆրանսիա—Լիոնից), երեքն էլ վկայված Երևանի Օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտից։ Այստեղ, Նոր-Մալաթիայի № 2 միջնակարգ դպրոցի գրադարանի վարիչն է զեյթունցի վիպագիր Սմբատ Բյուրատի որդին՝ Վաղինակ Բյուրատը, որի տղան հետևում է Երևանի Պոլիտեխնիկ ինստիտուտի փուրսերին։

Գյուղատնտեսական, կոլտնտեսական, արհեստագործական և ճարտարարվեստական աշխատանքներում ևս առաջ են քաշված հայրենադարձ բազմաթիվ ընդունակ երիտասարդներ։ Նրանցից շատերը շրջանի գործարաններում ու կոմբինատներում աշխատում

են որպես ցեխի վարիչներ ու ենթավարպետներ։ Շրջանում գոյություն ունեցող գուլպայի և տրիկոտաժի պրոմկոմբինատը, Ստալինի անվան տրիկոտաժի գործարանը, Շահումյանի անվան մետաքսագործվածքային գործարանը և տեղարդկոմբինատը լայնորեն բացել են իրենց դռները հայրենադարձ բանվորների ու բանվորուհիների համար։

Արտասահմանում, օտար գործարանների մեջ աշխատող ոչ մեկ հայ վարպետ կարողացել է ու կկարողանա հասնել այն պատվին, որին արժանացել է Ամերիկայից ներգաղթած Պարգև Զուքասզյանը։ Նրա նկարազարդած կրեպ դը շին, կրեպ մարոկեն, մարգիզետ և այլ մետաքսի նուրբ գործվածքները, որոնք պատրաստվում են Շահումյանի անվան մետաքսագործվածքային գործարանում, համամիութենական համբավի են տիրացել արդեն իսկ իրենց գեղեցկությամբ։ Եվ պետությունը վարձատրում է ոչ միայն բարոյապես՝ մեդալներ ու պատվոգրեր շնորհելով գյուտարար աշխատավորներին, այլև նյութապես պարգևատրելով նրանց, ապահովելով ամենքի բարեկեցությունը։

Ինչպես Հայաստանի մեծ ու փոքր կենտրոններում՝ քաղաքներում ու գյուղերում, Բերիա ավանի չորս թաղամասերում ևս մեծ կարևորություն է տրվում բուժսպասարկման։ Այստեղ կա բուժարան՝ իր բոլոր բաժանմունքներով, ծննդատուն, բժշկական և առողջապահական կետեր ու տրոպիկական կայան, որտեղ լուրջ պայքար է մղվում տրոպիկական հիվանդությունների, հատկապես մալարիայի դեմ, որը համարյա 100 տոկոսով անհետանալու վրա է՝ համեմատած նախասովետական շրջանին։

Նոր-Մալաթիայի կինո-թատրոնը

Բերիա ավանի չորս թաղամասերում՝ Նոր-Սեբաստիայում, Զարփախում, Նոր-Մալաթիայում և Նելսոն Ստեփանյանում, ես հանդիպեցի բազմաթիվ ծանոթների, ինչպես Գույումջյան ընտանիքը (դյորտ-յոլցի—Հալեպից), Չիլյան, Այանյան ընտանիքները (Քեսապից), Կահիրեի (Եգիպտոս) հայ եկեղեցու ժամկոչի ընտանիքը, իմ հորեղբոր թոռնորդին՝ Արամ Տեր-Ստեփանյանի ընտանիքը (Բեյրութից) և չորք-մարզպանցի Սահակ Ճերմակյանի որբևայրի կնոջ՝ Երանուհու ընտանիքը (Սուր—Լիբանանից), և վերջապես վաղեմի ուսուցիչ Նազարեթ Աբու-

սեֆյանը (Գրրդ-Խանից), որ արտասահմանում ամուրի, «գլուխը դնելիք մի տեղ» չէր ունեցել, մինչդեռ Հայաստանում, 60 տարեկանից հետո ամուսնացել և մի սիրունիկ աղջիկ երեխայի հայր էր եղել, միանգամայն պետության սնտուկից ծերության թոշակ ստանալով։ Նրանք, բոլորն էլ, Մայր Հայրենիքում անվտանգ ապրող լիիրավ սովետական քաղաքացու ինքնագոհ ու հպարտ ժպիտն ունեին իրենց դեմքերին։ Բայց իմ ուրախությունն անչափ մեծ եղավ տեսնելով Եսայի Ցաղուբյանին, Ջեբել-Մուսայի քառասուն օրերի հերոսամարտի (1915 թ.) քաջասիրտ մարտիկին, որի հասակը, հակառակ իր կյանքի 76 տարիների ոչ զանցառելի բեռան, էլի՛ մնում էր ուղիղ, Հայաստանի երկնուղիղ բարդիների նման սլացիկ։

— Այս՝ իմ մեծ տղան է, Հակոբը, ներկայումս կոլխոզնիկ,— ասաց նա ներկայացնելով իր ընտանիքի անդամներին.— այս՝ երկրորդ տղաս է, Վարդգեսը, որ 1947 թվականին ավարտելով Կիպրոսի Մելքոնյանի անվան կրթական ինստիտուտը, վերադարձավ Բեյրութ և միևնույն օրը նստեց տվետական նավն ու մեզ հետ ներգաղթեց Հայաստան։ Այս տարի նա ավարտելու է Հայաստանի պետական համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետի ռոմանո-գերմանական բաժինը, որն ընդգրկում է եվրոպական գրականությունն ու անգլերեն, ֆրանսերեն ու գերմաներեն լեզուները։ Այս մյուսը՝ Գեորգն է, որը գործարանում աշխատում է որպես փաթաթման ցեխի ենթավարպետ, իսկ Զոհրաբը այստեղ ներկա չէ, նա մեքենավար է. փոքր աղջիկս էլ դպրոցական է։

Ես հաջողության ցանկությունս եմ հայտնում երիտասարդ ուսանող Վարդգեսին, որը խորը թաղված մեծածավալ դասագրքի ուսումնասիրման աշխատանքի մեջ, պատրաստվում է ուսումնական տարեվերջին կատարվելիք պետական քննություններին։

— Այս ծիրանին ես իմ ձեռքովն եմ տընկել, բայց նրա սեփականատերը՝ Հակոբ տղաս՝ սիրով թույլ պիտի տա, որպեսզի դու ուտես նրա պտուղից,— ասում է Եսային ժպտալով. մի տեսակ կտակ՝ կատակի դիմակի տակ։

Հետո, իր որդիների ընկերակցությամբ, նա ինձ տանում է իր նորակառույց բնակարանի մոտ, որի մեջ, մոտիկ ապագայում, նա ամփոփելու է ներկայումս տարբեր շենքերում բնակվող իր որդիներին, ինչպես սովորություն էր նահապետական շրջաններում։ Պետությունը, նորերս, վարկ է տրամադրել իրեն և ահա, նա ուրախ ու երջանիկ է իր տան ամեն օր թիզ առ թիզ բարձրացող տուֆքարաշեն պատերի առջև։

— Բացման օրը սեղանս պատվել խոստացած է ինձ Նաիրի Զարյանը,— ասում է Եսային ներքին գոհունակությամբ, որի մեջ զգացվում է սովետահայ մեծանուն գրողին ճանաչելու հպարտությունը։

Ես, արտասահմանում եղած ժամանակս, «Սովետական Հայաստան» ամսագրում կարդացել էի սովետահայ ծանոթ գրող Վախթանգ Անանյանի ակնարկը հայրենադարձ Եսայի Ցաղուբյանի մասին և ուրախացել այն բանի համար, որ Հայաստանի գրողները մոտիկից էին հետաքրքրվում հայրենադարձ արժեքների հետ։ Բանաստեղծ, գրագետ, թատերգակ և վիպասան Նաիրի Զարյանի վերոհիշյալ խոստումը մեծագույն փաստն է այդ եղբայրական հետաքրքրության և հոգատարության։ Եվ անտարակույս, հայ նշանավոր գրողը, Եսայի Ցաղուբյանի արտասահմանյան երկարատև կյանքի մեջ պիտի գտնի հետաքրքիր ու դրվատիքի արժանի հերոսական դրվագներ, որովհետև այդ պարզունակ գյուղացու՝ Ջեբել-մուսացու կյանքը, սփյուռքահայ պատմության վերջին 60—65 տարիների ընդգրված մի շարք ազգային իրադարձությունների հետ կապ է ունեցել։

— Իմ երջանկությունը չափ ու սահման չունի ոչ միայն նրա համար, որ իմ զավակների կյանքն ու ապագան ապահովվել են շնորհիվ մեր հարազատ պետության, այլ մանավանդ նրա համար, որ այս ծառերը, այս սարերը, այս հողերն ու այս երկինքը մե՛րն են — ասում է Եսային խանդավառությամբ և միևնույն շեշտով ավելացնում.— Ես, Ս. Տաճարի քարերը հավաքելու համար, ոտով եմ գնացել մինչև Էջմիածին։ Ես ինձ անչափ երիտասարդ եմ զգում Հայրենիքի մեջ, որը մեզ պարգևել է Սովետական Միությունը։ Փա՜ռք Սովետական Միության իմաստուն կառավարության։

Արևը թեքվել էր դեպի մայրամուտը։ Ես ու Եսային միասին բարձրացանք Նոր-Սեբաստիայի զառիվերը։ Արևմտահայ նշանավոր երգիծաբան Հակոբ Պարոնյանի անվան փողոցի վրա գտանք Ցափուջյանների բնակարանը. չէ՞ որ Սարգիսն ու Աղատը ուսուցիչ էին եղել Ալեքսանդրեպոլի ազգային դպրոցում, որի տնօրենն էի եղել ես։ Մեր ողջագուրումը Աղատի հետ եղավ մտերմական։ (Սարգիսը իր նշանածի՝ օրիորդ Պուրսալյանի հետ, գնացել էր Երևան)։ Եկավ նաև նրանց հայրը՝ Արթին Ցափուջյանը։ Ու հետո պատրաստվեց սեղանը՝ ըստ Հայաս-

տանյան սովորության։ Ճաշին հաջորդեցին սուրճն ու խոսակցությունը։

— Երջանիկ եմ, չափից դուրս երջանիկ,— ասում է Ցափուջյանենց հայրը,— իմ վեց տղամարդ զավակների հետ, որոնք շնորհիվ մեր հարազատ կառավարության ստացել են բարձրագույն կրթություն կամ տիրացել արհեստների։ Ես ձեռքովս եմ մշակում տնամերձ հողամասը ու պահում իմ սեփական կովը, որն օրական տալիս է 18—20 կիլոգրամ կաթ։ Մի երկու ամիս հետո իմ տնկած ծառերն էլ կծլեն, կծաղկեն ու պտուղ կտան։ Այն ժամանակ էլ համեցեք։

Ու պատկերացրեք, որ ներկայումս Երևանից ըստ բավականի հեռու նկատված Բերիա ավանը, շատ մոտիկ ապագայում դառնալու է Երևանի մերձավոր արվարձաններից մեկը, երբ Նոր-Արաբկիրի մոտ, Հրազդանի անզուսպ ջրերի վրա կամար կապի այժմ կառուցվող հսկա կամուրջը։

Գիշերվա ժամը 10-ն է։ Հրաժեշտ ենք տալիս Ցափուջյան ընտանիքին։ Տասնհինգօրյա լուսինն իր կաթնային լույսն է փռում Արարատյան դաշտի վրա, բայց ո՛չ այն սգավոր լույսը, որի մասին գրել է Հայր Ղևոնդ Ալիշանն իր «Լուսնկայն գերեզմանաց Հայոց» քերթվածում, այլ ուրախ, կենսախայտ լույսը, վերածաղկող Սովետական Հայաստանի հսկայական վերելքն արտացոլող և այն արծաթածող ու առավել ևս գեղեցկացնող պայծառ լույսը։

Նոր-Մալաթիայի գեղակերտ կինոյից, ինչպես մեղուները փեթակից, դուրս է ելնում ցնծուն երիտասարդությունը՝ հայ երգը շրթներին։

— Ա՜յ, ես ձեր հոգուն մատաղ,— ասում է Եսայի Ցաղուբյանն ու ինձ նստեցնում Երևան վերադարձող մեծ ու հանգստավետ ավտոբուսի մեջ։

Ու ես հիացմունքով եմ դիտում Արաքսյան հովտի հայկական գյուղերը, որոնք հեռուն, էլեկտրական լույսի հեղեղի տակ շողշողում են աստղազարդ երկնքի նման, մինչ անթափանցելի խավարն է տիրապետում Արաքսի մյուս ափի վրա...։